

**370 կոմպլեկտ բանվորական արտահագուստի
գնում կազմակերպելու և պայմանագիր կնքելու մասին**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «ՀրազՁԷԿ» ԲԲԸ-ում 19.05.2023թ. ժամը 11⁰⁰–ին:

Նիստին մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ

Է.Մանամյան – Տնօրենների խորհրդի անդամ՝ անկախ տնօրեն,

Հանձնաժողովի նախագահի տեղակալ

Է.Մովսիսյան - նորոգման, շահագործման վարչության պետ

Հանձնաժողովի անդամներ՝

Տ.Մարտիրոսյանը- գլխավոր ճարտարագետ

Ե.Բաղդասարյան-ԳՃՏ կայանի տարածքում գործող այլ արտադրությունների աշխատանքների համակարգման գծով

Ս.Հակոբյան - ԿՏԱ պետ

Լ.Մնացականյան - Էլեկտրական արտադրամասի պետ

Ռ.Հակոբյան - տնտեսագիտական վարչության պետի տեղակալ

Հանձնաժողովի քարտուղար՝

Ս.Մարգարյան - տնտեսագիտական վարչության առաջատար ճարտարագետ-տնտեսագետ

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ **օրակարգը**.

1. ՀՁ-ՊԸ-ԲԱ-07-1/19.05.23 ծածկագրով 370 կոմպլեկտ բանվորական արտահագուստի գնային առաջարկների քննարկում, պայմանագրի կնքում:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Ստացվել է տնտեսական վարչության պետ Վ. Պետրոսյանի զեկուցագիրը (N27, առ 30.03.2023թ.), համաձայն որի էլնելով կայանի արտադրատեխնիկական կարիքներից Ընկերության արտադրամասերի պահանջարկի հիման վրա 2023 թվականի ընթացքում անհրաժեշտ է ձեռք բերել 370 կոմպլեկտ բանվորական արտահագուստ:

370 կոմպլեկտ բանվորական արտահագուստ ձեռք բերելու համար ընտրվել է գնման պարզեցված ընթացակարգը, համաձայն «ՀրազՁԷԿ» ԲԲ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության 8.4 կետի և 12 կետի դրույթների և ձևակերպվել է ՀՁ-ՊԸ-ԲԱ-07-1/19.05.23 ծածկագիրը:

Ընկերության մասնագետների կողմից ապրանքի արժեքների որոշման նպատակով կատարվել է շուկայի ուսումնասիրություն: Գնային առաջարկներ ներկայացնելու

հրավերներ են արվել մասնագիտացված կազմակերպություններին և ստացված առաջարկներով լրացվել է մրցակցային աղյուսակը.

Գնման առարկան	Չ/մ	Քանակ	Գնման սկզբնական /առավելագույն գինը/	Ապրանքների մատակարարման վայրը	Գնման հարցում ուղարկված կազմակերպությունների անվանումները	Ստացված առաջարկությունների մասին տվյալներ /1 միավորի համար/
1. Ամառային բանվորական արտահագուստ	կոմպլեկտ	370	19000 դր. ԱԱՀ-ով	ՀրազՁեհ ԲԲԸ	1. Տաշիր – Կար ՓԲԸ 2. Տոսպ ՍՊԸ 3. Տեքստ ուռույթ ՍՊԸ 4. Կոտայք Կոչ ՓԲԸ	1. Տաշիր – Կար ՓԲԸ- 17000 դր. ԱԱՀ-ով 2. Տոսպ ՍՊԸ - առաջարկ չկա 3. Տեքստ ուռույթ ՍՊԸ - 19000 դր. ԱԱՀ-ով 4. Կոտայք Կոչ ՓԲԸ - նշված խմբաքանակը չի ապահովվում

Ըստ ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրության, ընթացակարգի հաղթող կճանաչվի սահմանված չափորոշիչներին համապատասխան և լավագույն առաջարկ ներկայացրած մասնակիցը:

Վերլուծելով մրցակցային աղյուսակի տվյալները գնահատող հանձնաժողովը **որոշեց.**

1. ՀՋ-ՊԸ-ԲԱ-07-1/19.05.23 ծածկագրով 370 կոմպլեկտ բանվորական արտահագուստի պարզեցված ընթացակարգով գնման մրցույթում հաղթող ճանաչել «Տաշիր-Կար» ՓԲԸ-ին:
2. Կնքել պայմանագիր «Տաշիր-Կար» ՓԲԸ-ի հետ, համաձայն մրցակցային աղյուսակի տվյալների, 370 կոմպլեկտ բանվորական արտահագուստ՝ 1 կոմպլեկտը 17 000 դրամով՝ ներառյալ ԱԱՀ-ն, ձեռք բերելու համար:

Ընդունվել է որոշում. Կողմ՝ 7, դեմ՝ 0:

Է. Սանամյան
 Է. Մովսիսյան
 Տ. Մարտիրոսյան
 Ե. Բաղդասարյան
 Ս. Հակոբյան
 Լ. Մնացականյան
 Ռ. Հակոբյան

